

Անտուան փողոցի հետ հաղորդակցութեան մէջ է գլխաւոր փողոցով մը , որ երբեմն կը կոչուէր Արֆուանի փողոց (Rue royale) , իսկ այժմ կը կոչուի Rue du Birague. Շատ հաւանական է որ Տուրնէլի պալատին դուռն ալ այս Բիրագ փողոցին տեղն ըլլար , բացուելով Սէն'տ-Անտուան փողոցի վրայ :

Տուրնէլի պալատին ընդարձակութեան վրայ գաղափար մը տալու համար կը դնենք այստեղ Պիգանիոլի նկարագրութենէն մաս մը. — « Այս պալատին մէջ կային շատ մը վայրագաւիթներ (préaux), շատ մը Մատուռներ, տասներկու ձեմելի (galeries), երկու բուլ (parcs), վեց մեծ պարտէզ, առանց հաշուելու լարիւրնիթոսը , զոր կը կոչէին Բաւիդ (Dédale), նոյն պէս առանց հաշուելու ինն լծվար (arpens) տարածութեամբ մէկ ուրիշ պարտէզ մը կամ բուլ մը , զոր Բէթֆօրի գուքան իր պարտիզպանին հերկել կուտար արօրով »(1) :

Թէեւ Տուրնէլի պալատին մէջ կը գտնուէին շատ մը մատուռներ , բայց հոն բնակող թագաւորներն իրենց իրրեւ ծխական եկեղեցի ընտրած էին Ս. Պօղոս եկեղեցին (2) :



7

Սէն'տ-Ուէնի Պալատը

Պարիսի հիւսիսային կողմը, Պարիս եւ Սէն-Դընի քաղաքներուն մէջ տեղը կը գտնուի Սէն'տ-Ուէն քաղաքը , որ Սէն գետին երկայնութեամբ կը տարածուի Պարիսի սահմաններէն մինչեւ Սէն-Դընիի սահմանները. ուստի միւս համանուն աւաններէն զանազանելու համար ընդհանրապէս կը կոչեն զայն Saint-Ouen-sur-Seine.

(1) Piganiol, Անդ , եր. 425 :

(2) Le Maire, Անդ , թ. Բ, եր. 226 :